ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԵՏԱՓԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

հեռ. 0281-2-23-80,2-29-67

գ.Գետափ N4 «05» փետրվարի 2013թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

Գետափ համայնքի ընդհանուր ժողովի 04.02.2013թ.

Ժողովին ներկա էին Գետափ համայնքի շուրջ 227 բնակիչներ, համայնքի ավագանին և համայնքի ղեկավարի աշխատակազմը: Ժողովը սկսեց 17.00-ինև ավարտվեց 18.30-ին: Ժողովը վարում է համայնքի ղեկավար Գագիկ Ալոյանը, քարտուղարում է աշխատակազմի քարտուղար Գեղեցիկ Ասրյանը:

Օրակարգում

Համայնքի ղեկավարի 2012թ-ի կատարած աշխատանքների հաշվետվությունըև 2013թ.-ի համայնքային խնդիրների մասին:

Համայնքի ղեկավարը ողջունեց համայնքի բնակիչներին:
2012թ-ին կատարվել են մի շարք աշխատանքներ և լուծվել սոցիալական խնդիրներ:

1. Սկսվել է մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները, համայնքի բյուջեից կատարվել է 6.5 միլիոն ներդրում:
2. Գերեզմանոցում կատարվել է բարեկարգման աշխատանքներ՝ 696 հազ. դրամի չափով:
3. Կատարվել է ճանապարհների բարեկարգում՝ 2.8 միլիոն դրամի չափով:
4. Կազմակերպվել է աղբահանություն 360 հազ դրամի չափով:
5. Կազմակերպվել մի շարք մշակութային միջոցառումներ, որի համար ծախսվել է 168 հազ դրամի չափով:
6. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է դրամական օգնություն 600 հազ դրամի չափով:
7. Հարազատին կորցրած 17 ընտանիքներին հատկացվել է 510 հազ դրամի չափով օգնություն:

8. Ապահովվել է փողոցների լուսավորությունը:
Բյուջեն կատարվել է 106 տոկոսի չափով:
Արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Մ. Նազարյանը և Հ. Թառոյանը:
Համայնքի անդամ Սամվել Հովհաննիսյանը առաջարկեց մեծ ուշադրություն դարձնել ներհամայնքային ճանապարհների վերանորոգմանը, գյուղի չգազաֆիկացված թաղամասերի գազաֆիկացմանը: Համայնքի բնակիչ Վաչիկ Զաքարյանը առաջարկեց գյուղի կենտրոնական հրապարակի ասֆալտապատում: Համայնքի բնակիչների բոլոր հարցերին տրվեց հստակ և սպառիչ պատասխաններ:

Ժողովը որոշեց

Տալ հավանություն համայնքի ղեկավարի 2012թ-ի կատարած աշխատանքների և բյուջեի կատարման մասին հաշվետվությանը:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Ալոյան**